# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 1

**Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի Ընդհանուր ժողովի, 29 նոյեմբերի 1943 թ.**

Ներկա են — Ակադեմիայի իսկական անդամներ՝ Աբեղյան Մ. Խ., Ալիխանյան Ա. Ի., Աճառյան Հ. Հ., Բունիաթյան Հ. Բ., Գուլքանյան Վ. Հ., Եղիազարով Ի. Վ., Թամամշև Ա. Ջ., Թումանյան Մ. Գ., Իսագուլյան Վ. Ի., Իսահակյան Ա. Ս., Կարապետյան Ս. Կ., Հակոբյան Ա. Ա., Ղափանցյան Գ. Ա., Մալխասյան Ս. Ս., Պաֆֆենգոլց Կ. Ն., Տերտերյան Ա. Հ., Օգանեսով Լ. Ա., Օրբելի Հ. Ա.:

*Ժողովը բաց է անում Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի իսկական անդամներից ամենատարիքավոր ակադեմիկոս* Ս. Ս. Մալխասյանը:

*Ակադեմիկոս Մալխասյանն արտահայտեց բոլոր հայ գիտնականների, ինտելիգենցիայի, ամբողջ հայ ժողովրդի անհուն բերկրանքը Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի կազմակերպման առթիվ. Նա հայտնեց, որ ազգային հզոր գիտա-հետազոտական կենտրոն ստեղծելու նկատմամբ հայ ժողովրդի դարավոր իղձը կարող էր իրականանալ և իրականացավ միմիայն Սովետական իշխանության օրով, որն ստեղծեց և ապահովեց բոլոր պայմանները Սովետական մեծ Միության մեջ ապրող բոլոր ժողովուրդների կուլտուրայի բարգավաճման համար։ Ակադեմիկոս Մալխասյանը ջերմագին շնորհակալություն հայտնեց մեծ առաջնորդ ընկեր* Ստալինին *հայ ժողովրդի կուլտուրայի զարգացման վերաբերմամբ նրա ցուցաբերած անդուլ հոգատարության համար։ Ակադեմիկոս Ս. Մալխասյանը նշեց ՍՍՌ Միության Գիտությունների Ակադեմիայի ու նրա պրեզիդենտ ակադեմիկոս Վ. Լ. Կոմարովի մատուցած ծառայությունը ՍՍՌ Միության Գիտությունների Ակադեմիայի Հայկական Ֆիլիալի ղեկավարման գործում, որի բազայի վրա կազմակերպվեց Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիան։*

Օրակարգ

1. *Ակադեմիայի պրեզիդենտի ընտրությունը.*
2. *Ակադեմիայի երկու վիցե-պրեզիդենտների ընտրությունը.*
3. *Պրեզիդիումի մեկ անդամի ընտրությունը.*
4. *Բաժանմունքների նախագահների ընտրությունը.*
5. *Ակադեմիայի պատվավոր անդամների ընտրությունը.*
6. *Ընթացիկ հարցեր։*

1. Լսեցին. *Հայկական ԱՍՌ Գիտությունների Ակադեմիայի պրեզիդենտի ընտրությունը։*

*Ակադեմիկոս* Հովսեփ Աբգարի Օրբելին *միաձայն ընտրվեց Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի պրեզիդենտ։*

2. Լսեցին. *Ակադեմիայի երկու վիցե-պրեզիդենտների ընտրությունը։*

Վարդան Հովհաննեսի Գուլքանյանը և Վիկտոր Համազասպի Համբարձումյանը *միաձայն ընտրվեցին Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի վիցե-պրեզիդենտներ։*

3. Լսեցին. *Պրեզիդիումի մեկ անդամի ընտրությունը։*

*Ակադեմիկոս* Սահակ Կարապետի Կարապետյանը *միաձայն ընտրվեց Պրեզիդիումի անդամ։*

4. Լսեցին. *Բաժանմունքների նախագահների ընտրությունը։*

*Միաձայն ընտրվեցին՝*

*Ակադեմիկոս* Գրիգոր Այվազի Ղափանցյանը՝ *Հասարակական գիտությունների Բաժանմունքի նախագահ։*

*Ակադեմիկոս* Խաչատուր Սեդրակի Կոշտոյանցը՝ *Բիոլոգիական գիտությունների Բաժանմունքի նախագահ։*

*Ակադեմիկոս* Իվան Վասիլի Եղիազարովը՝ *Ֆիզիկո-մաթեմատիկական և բնական գիտությունների Բաժանմունքի նախագահ։*

*Ակադեմիկոս* Միքայել Գալուստի Թումանյանը՝ *Գյուղատնտեսական գիտությունների Բաժանմունքի նախագահ։*

5. Լսեցին. *Ակադեմիայի պատվավոր անդամների ընարությունը։*

*ՍՍՌ Միության Գիտությունների Ակադեմիայի Պրեզիդենտ ակադեմիկոս* Վլադիմիր Լեոնտևիչ Կոմարովը *միաձայն ընտրվեց Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի պատվավոր անդամ։*

6. Լսեցին. *Ընթացիկ հարցեր։*

*Ակադեմիկոս Ս. Կ. Կարապետյանն առաջարկություն է մտցնում ակադեմիկոս-քարտուղարի ընտրությունը հետաձգել մինչ այն ժամանակ, երբ Երևանում կլինեն Ակադեմիայի բոլոր անդամները, որպեսզի հնարավոր լինի ավելի լայն ընտրություն կատարելու, նկատի ունենալով, որ Երևանում առկա ուժերի մի զգալի մասն արդեն ծանրաբեռնված է Ակադեմիայում այլ ղեկավար պաշտոններ վարելու պարտականություններով։ Իսկ մինչ այդ հանձնարարել Պրեզիդիումին՝ ընտրել և հաստատել Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի Պրեզիդիումի գիտնական քարտուղար ակադեմիկոս-քարտուղարի պարտականությունների համապատասխան մասը կատարելու համար։*

*Ակադեմիկոս Ս. Կ. Կարապետյանի առաջարկությունն անցնում է միաձայն։*

*Ժողովի նախագահ՝ ակադեմիկոս* Ս. Ս. Մալխասյան
*Ժողովի քարտուղար՝ ակադեմիկոս* Վ. Հ. Գուլքանյան

## ПРОТОКОЛ № 1

**Общего Собрания Академии наук Армянской ССР**

**от 29-го ноября 1943 г.**

***Присутствуют:*** Действительные члены Академии *Абегян М. Х., Акопян А. А., Алиханян А. И., Ачарян Г. А., Бунятян Г. Х., Гулканян В О., Егиазаров И. В., Исаакян А. С., Исагулян В. И., Капанцян Г. А., Карапетян С. К., Малхасян С. С., Оганесов Л. А., Орбели И. А., Паффенгольц К. Н., Тамамшев А. З., Тертерян А. А., Туманян М. Г.*

Собрание открывает старейший из действительных членов Академии наук Армянской ССР академик *Малхасян С. С.*

Академик Малхасян выразил беспредельную радость всех армянских ученых, интеллигенции, всего армянского народа по случаю образования Академии наук Армянской ССР; он заявил, что вековая мечта армянского народа о создании мощного национального научно-исследовательского центра могла быть осуществлена и осуществилась лишь при Советской власти, которая обеспечила все условия свободного расцвета культуры всех народов, населяющих великий Советский Союз. Академик Малхасян выразил горячую благодарность великому вождю товарищу *Сталину* за его неустанные заботы о развитии культуры армянского народа. Академик Малхасян отметил заслуги Академии наук Союза ССР и ее Президента академика Комарова В. Л. за руководство Армянским филиалом Академии наук Союза ССР, на базе которого образована Академия

Повестка дня:

1. Избрание Президента Академии
2. Избрание двух вице-президентов Академии
3. Избрание члена Президиума
4. Избрание председателей Отделений
5. Выборы почетных членов Академии
6. Текущие вопросы.

1. ***Слушали:*** Об избрании Президента Академии наук Арм. ССР

Единогласно избран Президентом Академии наук Армянской ССР академик *Иосиф Абгарович Орбели.*

2. ***Слушали:*** Избрание двух вице-президентов Академии.

Единогласно вице-президентами Академии наук Армянской ССР избраны: академик *Гулканян* Вартан Оганесович,
академик *Амбарцумян* Виктор Амазаспович.

3. ***Слушали:*** Избрание члена Президиума.

Единогласно членом Президиума избран академик *Карапетян* Саак Карпович.

4. ***Слушали:*** Избрание Председателей Отделений.

Единогласно избраны:

Председателем Отделения общественных наук—академик *Капанцян* Григорий Айвазович

Председателем Отделения Биологических наук—академик *Коштоянц* Хачатур Седракович

Председателем Отделения Физико-Математических и естественных наук—академик *Егиазаров* Иван Васильевич

Председателем Отделения Сель.хоз.наук —академик *Туманян* Михаил Галустович

5. ***Слушали:*** Выборы почетных членов Академии.

Почетным членом Академии наук Арм. ССР единогласно избран Президент Академии наук Союза ССР академик *Комаров* Владимир Леонтьевич.

6. ***Слушали:*** Текущие вопросы: академик С. К. Карапетян вносит предложение отложить избрание академика-секретаря Академии наук до того времени, когда съедутся в Ереван все члены Академии, чтобы иметь возможность более широкого выбора, учитывая, что наличные в Ереване силы в значительной части уже загружены избранием на другие руководящие должности в Академии. Впредь же до этого поручить Президиуму избрать и утвердить ученого секретаря Президиума Академии наук Армянской ССР для выполнения соответственной части обязанностей академика-секретаря.

Предложение академика С. К. Карапетяна принимается единогласно.

Председатель Собрания академик *Малхасян С. С.*
Секретарь Собрания академик *Гулканян В. О.*